

**Ֆինանսական համակարգի հաշտարարը՝ համաձայն «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի, իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2009 թ. հունվարի 24-ից: Ստորև ամփոփված է Հաշտարարի կողմից ձևավորված 2009 թ. հուլիս ամսվա նախադեպը:**

Հաշտարարի գրասենյակը հուլիս ամսին ստացել է ֆինանսական կազմակերպություններին վերաբերող ընդհանուր քանակությամբ քսաներեք բողոք: Ֆինանսական կազմակերպություններին չվերաբերող Գրասենյակի ստացած քաղաքացիների զանգերն ու այցելությունները բազմաթիվ են: Ֆինանսական կազմակերպություններին վերաբերող քսաներեք բողոքներից տասներեքը, համաձայն օրենքի, ենթակա չեն քննության Հաշտարարի կողմից (հաճախորդների մի մասը իրավաբանական անձինք են կամ անհատ ձեռներեցներ, մյուսների բողոքները կապված են մինչ Հաշտարարի մասին օրենքն ուժի մեջ մտնելը տեղի ունեցած իրադարձությունների հետ, որոշ պահանջների վերաբերյալ արդեն իսկ առկա է դատարանի որոշում, կամ գործը գտնվում է դատարանի վարույթում, մնացած դեպքերում բողոքները կրում են ընդհանուր բնույթ և ըստ էության չեն պարունակում գույքային պահանջ):

Հաշտարարի քննությանը ենթակա տաս բողոքներից հինգը հուլիսին ստացվել են գրավոր տեսքով և ընդունվել են քննության, հինգը պահանջների քննությունը Հաշտարարի լիազորությունների շրջանակում են, սակայն հաճախորդները նախապես սահմանված կարգով իրենց բողոք-պահանջները չեն ներկայացրել ֆինանսական կազմակերպությանը: Գրասենյակի աշխատակիցներն օգնել են վերջիններիս ձևակերպել իրենց պահանջները և ներկայացնել ֆինանսական կազմակերպությանը:

<b>2009թ.-ի հուլիս ամսվա ընթացքում ներկայացրած ընդհանուր բողոքների քանակը</b>	<b>23</b>
<b>1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից</b>	<b>10</b>
1.1. Ենթակա են քննության հաշտարարի կողմից, սակայն հաճախորդը նախապես չի դիմել ֆինանսական կազմակերպությանը	5
1.2. Ընդունվել են քննության՝ գրավոր պահանջի ներկայացմամբ	5
1.2.1 Կապված են վճարահաշվարկային գործարքների (բանկոմատով կատարվող քարտային գործարքների) հետ	1
1.2.2 Կապված են վարկային պայմանագրերի հետ	2
1.2.3 Կապված են գրավատան կողմից գույքի իրացման հետ	1
1.2.4 Կապված են ապահովագրական հատուցման չվճարման հետ	1

Հաշտարարի գրասենյակ կարելի է դիմել՝ զանգահարելով 58-23-22 , 58-23-21 հեռախոսահամարով կամ այցելելով Վազգեն Սարգսյան 26/1, «Էրեբունի Պլազա» բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ: E-mail: [info@fsm.am](mailto:info@fsm.am) Web: [www.fsm.am](http://www.fsm.am)